Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/185» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10.09.2019թ.
ժամը՝ 10:10

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Բազեյան /գնահատող/, Ա. Փլավչյան /գնահատող/, Ա. Քերոբյան /բացող/, Ա. Մուրադյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ս. Ներսիսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, համաձայն որի մասնակիցների հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացությունը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/185» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Ս. Ներսիսյան)

2.1 Մասնակիցները տրամադրել են «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացրած ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը, արձանագրեց, որ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց անհամապատասխանություն «Ատլանտ էքստրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ապրանքի նկարագրում: «Ատլանտ էքստրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 3-րդ /ղեկավարի բազկաթոռ/ և 4-րդ /աթոռ/ չափաբաժինների նկարագրերում ներառված ապրանքների չափսերը չեն համապատասխանում հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրով սահմանված չափսերին: Մասնավորապես ղեկավարի բազկաթոռի չափսը հրավերով սահմանված է առնվազն 1120*620*770 սմ, այնինչ «Ատլանտ էքստրա» ՍՊԸ-ի ներկայացրած չափսերն են՝ 68*47*67 սմ:

Աթոռի չափսը հրավերով սահմանված է նվազագույնը 860*530*560 սմ, այնինչ «Ատլանտ էքստրա» ՍՊԸ-ի ներկայացրած չափսերն են՝ 49*83*49 սմ:

2.2 Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 47-րդ կետի, առաջարկել «Ատլանտ էքստրա» ՍՊԸ-ին

երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը, այլապես «Ատլանտ էքստրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 16.09.2019թ., ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ս. Ներսիսյան

Անդամներ՝ Ե. Բազեյան

Ա. Փլավչյան

Ա. Քերոբյան

Ա. Մուրադյան

Քարտուղար՝ Ս. Եղիազարյան